Հաստատված է Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
2018թ. դեկտեմբերի 27 -ի թիվ 5 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝

Ռուբեն Միրզախանյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ-ի ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

ԵՐԵՎԱՆ - 2018

ԵՐԵՎԱՆ - 2018

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնադրությունը սահմանում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) Սկզբնական կրթության ֆակուլտետի կազմում գործող մուլտիմեդիա գիտահետազոտական լաբորատորիայի (այսուհետ՝ Լաբորատորիա) գործունեության կարգն ու կանոնները:

1.2. Լաբորատորիայի պաշտոնական անվանումը՝

հայերեն՝ ՀՊՄՀ Մուլտիմեդիա լաբորատորիա

ռուսերեն՝ Мультимедийная лаборатория АГПУ

անգլերեն՝ ASPU Multimedia laboratory

1.3. Լաբորատորիայի գործունեության հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Սկզբնական կրթության ֆակուլտետ

1.4. Լաբորատորիան Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումն է:

1.5. Լաբորատորան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի կառավարման մարմինների որոշումներով, Համալսարանի ռեկտորի հրամաններով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով,

1.6. Լաբորատորիան ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով,

1.7. Լաբորատորիան ունի իր անվամբ ձևաթուղթ:

2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Լաբորատորիայի նպատակներն են.

2.1.1. ստեղծել մուլտիմեդիա միջավայր հայերեն լեզվով ինտերակտիվ բովանդակություն մշակելու համար նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար,

2.1.2. աջակցել Հայաստանի Հանարպետությունում մանկավարժական բարձրորակ կադրերի պատրաստմանը և վերապարտաստմանը մասնագիտական գործունեության ընթացքում նորագույն ՏՀՏ-ների լայն կիրառման գործընթացում,

2.1.3. իրականացնել գիտահետազոտական և ուսումնահետազոտական աշխատանքներ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների լայն կիրառման ուղղությամբ՝ իրականացնելով նաև վարքային դրսևորումների հետազոտություններ:

2.2. Լաբորատորիայի խնդիրներն են.

2.2.1. ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ՀՀ-ում աշխատող դաստիարակների, մանկավարժ-մասնագետներիտեխնոլոգիական հմտությունների զարգացում՝ մասնագիտական գործընթացում ՏՀՏ-ների լայն կիրառման ուղղությամբ,

2.2.2. մուլտիմեդիա հայալեզու բովանդակության մշակման ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքների իրականացում,

2.2.3. հետազոտել և բացահայտել նախադպրոցական ու կրտսեր դպրոցական տարիքի երեխաների վարքային, հոգեբանական դրսևորումները, առանձնահատկությունները, դրանց փոփոխությունները և ՏՀՏ ազդեցությունը նրանց վրա՝ կիրառելով առաջավոր ծրագրային վերլուծական ապահովումներ,

2.2.4. օտարերկրյա և հանարպետական ստորաբաժանումների հետ համատեղ իրականացնել գիտական, հետազոտական, ուսումնական տարբեր աշխատանքներ:

2.3. ***Լաբորատորիան իրականացնում է հետևյալ գործառույթները***.

2.3.1. պարբերաբար թարմացում է Լաբորատորիայում գործող համացնացային պորտալի բովանդակությունը և սահմանում է նոր առաջադրանքներ ու խնդիրներ,

2.3.2. ներգրավում է Լաբորատորիայում իրականացվող գիտահետազոտական և ուսումնական աշխատանքներում ապագա մանկավարժ-մասնագետների և ներկայում գործող մանկավարժների,

2.3.3. ցուցաբերում է ակտիվ մասնակցություն կրթության տեղեկատվայնացման, հայալեզու կրթական ինտերակտիվ բովանդակության ստեղծման և տարածման գործընթացներին,

2.3.4. համագործակցում է Համալսարանում գործող այլ լաբորատորիաների և ստորաբաժանումների, հրատարակվող գիտական ամսագրերի, հանդեսների խմբագրական-հրատարակչական խորհուրդների հետ.

2.3.5. համագործակցում է այլ գիտակրթական կառույցների գիտահետազոտական կենտրոնների և ստորաբաժանումների հետ.

2.3.6. կազմակերպում է գիտական սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ.

2.3.7. իրականացնում է գրահրատարակչական գործունեություն, մանկավարժների և մասնագետների պարբերաբար վերապատրաստումներ ՏՀՏ-ների կիրառման, ինտերակտիվ բովանդակության մշակման և այլ գիտահետազոտական ուղղություններով,

2.3.8. իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի կամ պրոռեկտորների հանձնարարությամբ իրականացնում է օրենքով սահմանված այլ գործառույթներ:

3. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Լաբորատորիայի աշխատանքների համակարգումն իրականացվում է Համալսարանի սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանի կողմից:

3.2. Լաբորատորիայի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանը:

3.3. Լաբորատորիայի ղեկավարը.

3.3.1. հետևում է լաբորատորիայի աշխատանքային և ֆինասնասկան գործունեությանը,

3.3.2. կազմակերպում և ղեկավարում է լաբորատորիայի ընթացիկ աշխատանքները,

3.3.3. լաբորատորիայի անունից ներկայացնում է Համալսարանը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, տարբեր գերատեսչություններում և կազմակերպություններում,

3.3.4. պատասխանատու է լաբորատորիայում իրականացվող աշխատանքների պատշաճ որակի համար:

3.4. Լաբորատորիայի աշխատակիցները.

3.4.1. Լաբորատորիայի գործունեությանը ներգրավվում են ամբիոնի աշխատակիցները, կատարում են իրենց անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի, դեկանի) հանձնարարականները և պատասխանատու են դրանց կատարման համար:

3.4.2. Լաբորատորիայի գործունեությանը ներգրավված անձիք իրականացնում են Լաբորատորիայի գործառույթներից բխող աշխատանքներ:

3.4.3. Լաբորատորիայի գործունեությանը ներգրավված անձիք պարտավոր են ենթարկվել Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, պահպանել աշխատանքային էթիկայի կանոնները:

3.5. Լաբորատորիան իր կառուցվածքում է ներառում 3 ուսումնալաբորատոր սենյակներ՝ համապատասխան կահավորմամբ:

4. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1. Լաբորատորիայի գույքի և ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

4.1.1. լաբորատորիային ՀՊՄՀ-ի և այլ դրամաշնորհային ծրագրերի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը և դրամական միջոցները,

4.1.2. ՀՀ պետական բյուջեից պետական պատվերի շրջանակներում կամ այլ եղանակներով ստացված միջոցները,

4.1.3. ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, նվիրված և կտակված գույքը, դրամաշնորհները,

4.1.4. լաբորատորիայի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարվող միջոցները,

4.1.5. լաբորատորիային թույլատրված գործունեության տեսակներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացած միջոցները:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Լաբորատորիայի վերակազմավորումը կամ լուծարումն իրականացվում է Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

5.2. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից՝ Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: